

**ՌԵՍԱՅԻՆ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ
ՈՐՈՇ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ԱՆԳԼԵՐԵՆԻ ՀԱՆՊԱՏՐԱՍՏԻՑ ԲԱՆԱՎՈՐ ԽՈՍՔՈՒՄ**

Վերջին շրջանում լեզվաբանների ուշադրությունը առավել շատ են գրավում հաղորդակցման տարբեր երևույթներ: Հայտնի է, որ հաղորդակցությունը մի շարք գործառույթներ ունի, բայց դրա հիմնական գործառույթը հաղորդակցվողներին տեղեկատվություն փոխանցելն է: Հաղորդակցության կարևոր կատեգորիաներից մեկը նախադասության տեղեկատվական կառուցվածքն է կամ հաղորդակցական տրոհումը, այն է՝ նախադասության տրոհումը թեմայի և ռեմայի: Սա նախադասությունը երկու հատվածների տարանջատելու խնդիրն է, որոնցից մեկը պարունակում է նախադասության սկզբնակետը, իսկ մյուսը՝ նոր տեղեկատվությունը: Այս խնդիրը ավանդաբար արծածվում է «նախադասության առկայական տրոհում» կոչվող լեզվաբանական տեսության մեջ:

Թեմայի և ռեմայի արտահայտման առանձնահատկություններին և շարադասությանը անդրադարձել են մի շարք լեզվաբաններ, որոնցից են Ջ. Մաթեզիուսը, Ռ. Բվերկը, Ա. Դաունինգը, Ժ. Ֆիրբասը, Ֆ. Դանեշը, Չ. Ֆիլմորը, Դ. Քրիսթալը, ռուս լեզվաբաններից Մ. Ի. Օսկուպշիկովան, Օ. Ալեքսանդրովան, Մ. Բլոխը, Ա. Սմիրնիցկին, Լ. Իօֆիկը, Բ. Իլիշը և ուրիշներ:

Նախադասության առկայական տրոհման միավորները տարբեր աշխատանքներում տարբեր կերպ են կոչվել: Մի շարք եզրույթներ են առաջարկվել դրանք անվանելու համար, ինչպես օրինակ՝ «թեմա» և «ռեմա» /Ֆիրբաս, 2006/, «հոգեբանական սուբյեկտ» և «հոգեբանական պրեդիկատ» /Իլիշ, 1981/, «բառային սուբյեկտ» և «բառային պրեդիկատ» /Սմիրնիցկի, 1957/: «Ռեմա» եզրույթի փոխարեն հաճախ օգտագործվում է «ֆոկուս» եզրույթը /Բվերկ և այլք, 1982/:

Հարկ ենք համարում նշել նաև այն փաստը, որ ֆոկուսը միշտ չէ, որ համընկնում է ռեմայի հետ: Ռեման, ինչպես նշեցինք, կրում է նոր տեղեկատվություն, բայց այն, ինչ մենք կոչում ենք «ֆոկուս», անպայման չէ, որ նոր տեղեկատվություն ներմուծի: Ֆոկուսը և ֆոկու-

սային կառույցները լսողի ուշադրությունը կենտրոնացնում են այն բանի վրա, ինչը որ կարևորվում է խոսողի կողմից երկխոսության տվյալ պահին: Այն կառույցները, որոնք ավելի ընդարձակ ռեմային հատված են ներմուծում, կոչվում են մակրո-ֆոկուս ներմուծող կառույցներ, իսկ ավելի սահամանափակ ռեմային հատված ներմուծողները՝ միկրո-ֆոկուս ներմուծող կառույցներ /Միլլեր, Վեյներտ, 2009: 203-209/:

Թեմայի և ռեմայի արտահայտման միջոցները մեծամասամբ ուսումնասիրվել են գրավոր տեքստերի շրջանակներում, մասնավորապես՝ գրավոր տեքստերի պարզ նախադասություններում: Սույն հոդվածի ելակետային նպատակն է ցույց տալ, որ նախադասության տեղեկատվական տրոհումը կարող է մի շարք առանձնահատկություններ ունենալ բանավոր խոսքում ևս. մի փաստ, որը մեծ ուշադրության չի արժանացել: Ասվածը սերտ կապ ունի անգլերենի **հանպատրաստից բանավոր** խոսքի հետ: Հայտնի է, որ գրավոր տեքստերը հիմնականում նախապես պլանավորված և մշակված են՝ ի տարբերություն հանպատրաստից բանավոր խոսքի: Վերջինիս ոչ պլանավորված լինելու փաստը շատ հաճախ կախված է լինում հաղորդակցական իրավիճակից, հաղորդակցման մասնակիցներից և քննարկվող թեմայից: Ուստի, հանպատրաստից բանավոր խոսքի ուսումնասիրումը նախադասության հաղորդակցական տրոհման լույսի ներքո կարող է երևան բերել ռեմայի, այն է՝ հաղորդակցական ֆոկուսի գործարարական նոր դրսևորումներ և յուրահատկություններ: Սույն հոդվածում կփորձենք ներկայացնել անգլերենի հանպատրաստից բանավոր խոսքի ռեմային կառույցների որոշ առանձնահատկություններ:

Ռեմային հատվածներ ներմուծող կառույցների շեշտադրումները ավելի ակնառու դարձնելու նպատակով կիրառել ենք մի շարք մեթոդներ՝ փոխակերպական, բաշխումային, փոխարինման և համատեքստային: Որպես լեզվանյութ են հանդիսացել համացանցից դուրս բերված օրինակները:

Նախադասության ռեմային հատված ներմուծող կառույցներից ամենահաճախ հանդիպող կառույցը **“you know”** խոսույթային ցուցիչն է: Ինչպես հայտնի է, վերջինիս գործառույթը տարակուսանք արտահայտելն ու դադար լրացնելն է: Սակայն, ի թիվս այս գործառույթների, այս ցուցիչը կատարում է մի գործառույթ ևս. այն կար-

ծես թե նախազգուշացնում է լսողին, որ կարևոր տեղեկատվություն է արտահայտվելու: Հետևյալ օրինակում ներկայացվում է երկու ընկերների միջև երկխոսություն՝ շուն ձեռք բերելու վերաբերյալ.

M: Well, that's a good question. I mean, I do love dogs. But they really are a commitment and a responsibility, of course. And that isn't to be taken lightly. But...

L: A lot of people do, a lot of people... especially in the States. People here in Sweden seem to treat their dogs much better overall than people in the States. But the thing is... I've seen the most horrible things back in the States. People get a dog and, *you know, they're all excited about it at first*, and then they just, *you know, the novelty wears off...*

M: Right. /Better at English <http://doc/>

“You know” խոսույթային ցուցիչի դեպքում կարևորություն է ստրվում դրան հաջորդող ամբողջ դատողությանը, այլ ոչ թե միայն մեկ միավորի: Հետևաբար կարող ենք փաստել, որ “you know” ցուցիչը մակրո-ֆոկուս ներմուծող կառույց է: Հարկ է նշել, որ “you know” ցուցիչը ռեմային հասված ներմուծելու գործառույթ է ձեռք բերում միջադաս դիրքում, իսկ առաջադաս դիրքում գործածվելիս այն միայն կասկած է արտահայտում: Ռեմա ներկայացնելու գործառույթն էլ ավելի է շեշտվում, երբ տվյալ ցուցիչին նախորդում է “but” համադասական շաղկապը: Օրինակ.

L: Yeah, yeah...

M: But I think that... this is kind of a morbid thing, but, *you know, dogs die.*

L: Yeah.

“You know” խոսույթային ցուցիչի ռեմա ներմուծելու գործառույթը կփոխվի, եթե այն գործածվի վերջադաս դիրքում: Ապացուցելու համար կիրառենք բաշխումային մեթոդը.

But I think that... this is kind of a morbid thing, but, *you know, dogs die.* → But I think that

... this is kind of a morbid thing, but, dogs die, *you know.*

Երկրորդ՝ փոխակերպված նախադասությունում, դրվելով վերջադաս դիրքում, “you know” խոսույթային ցուցիչը կորցնում է ռեմա ներմուծելու իր գործառույթը և պարզապես կասկած է արտահայտում:

Վերլուծվող երկխոսությունների շրջանակում հանդիպեցինք “**I mean**” խոսության ճյուղիչին: Այն հիմնականում հնչում է արական սեռի ներկայացուցիչների խոսքում, օգտագործվում է դադարները լրացնելու համար, այդ իսկ պատճառով էլ անգլերենում շատ հաճախ կոչվում է pause-filler: Միևնույն ժամանակ այն մատնանշում է, որ կարևոր տեղեկատվություն է հաղորդվելու: Օրինակ.

Mom: No...no, that’s exactly... ’cause... I think the first couple of times I said after and then I thought, “Oh I’m going to give her a little variety,” so I’ll say five past six because we do say that, but it’s... *I mean we wouldn’t think it’s odd.*

Lori: OK, that’s great, and that’s really just the point I wanted to make... that often... /Oprea <http://doc/>

“I mean” խոսության ճյուղիչը տեղեկատվական արժեք է հաղորդում այն դատողությանը, որը անմիջապես հաջորդում է դրան: Սա կարելի է ցուցադրել, եթե օգտագործենք սղման սկզբունքը.

That was really bad; you know, *I mean the dog was 18 years old, I mean, it was a very long-lived dog?* → That was really bad; you know, *the dog was 18 years old, it was a very long-lived dog?*

Փոխակերպված օրինակից երևում է, որ նախադասությունը այս դեպքում կորցնում է իր տեղեկատվական ուժը: Հետևաբար կարող ենք ասել, որ “I mean” խոսության ճյուղիչը նոր ռեմային հատված է ներմուծում: Եթե համեմատելու լինենք “I mean” և “you know” խոսության ճյուղիչների ռեմա ներմուծելու գործառնությունները, ապա կտեսնենք, որ “I mean” ճյուղիչի կողմից ներմուծված ռեմային հատվածը ավելի ընդարձակ է, քան “you know” խոսության ճյուղիչի կողմից ներմուծվածը, քանի որ վերջինս կարող է ներմուծել կամ մաս կազմող մի միավոր, կամ մի ամբողջ դատողություն, իսկ “I mean” ճյուղիչը ներմուծում է միայն ամբողջական դատողություն:

Հաջորդ օրինակում, որը երկխոսություն է երկու ընկերների միջև, թե ինչպես են անցկացնելու Նոր Տարին, տեսնում ենք, որ “I mean” խոսության ճյուղիչը մասնակիորեն մոտենում է իր զուտ բառային իմաստին, սակայն այն չի կորցնում ռեմա ներկայացնելու իր գործառնությունը: Օրինակ.

Fei: Let’s see... I’d like to learn more English, so that I can watch movies and sing songs in English. And I’d also like to improve my performance at work.

Jerry: That shouldn't be too hard for you. *I mean, for such a good student and a hard worker.*

Fei: Thank you Jerry. It's very kind of you to say so! /Learn English with Teacher Joe <http://doc/>

Հաղորդակցման ընթացքում երբեմն կարիք է լինում, որ հաղորդակցվողները լրացուցիչ բացատրողական տեղեկատվություն, պարզաբանում տան որոշակի հանգամանքների վերաբերյալ: Այդ դեպքում հաճախ գործածվում է **“the thing is...”** կառույցը: Վերջինս, թերևս ցածր հաճախականություն ունի: Ներկայացնենք հետևյալ օրինակը.

Mom: No, for sure.

Lori: *Yeah, the thing is... is that sometimes when non-native speakers are learning English, teachers will tell them misguided rules that they maybe read in some outdated book somewhere saying things like, “In American English you have to use” after” when you talk about time; you can't use “past”.*

Mom: Yeah, I think one time I said “past”... I think I said “five past six”. In fact I purposely said “past” because I was trying to give you some variety of the difference... we can tell time... because Americans will say “past”. /Oprea <http://doc/>

“The thing is...” կառույցի դեպքում հեղինակը կարծես թե ցանկանում է պարզաբանել այն տեղեկատվությունը, որը տրվել է նախորդ նախադասության մեջ, և “the thing is...” կառույցին հաջորդող տեղեկատվությունը մեծ կարևորություն է ստանում: Սույն միտքը կարող ենք ապացուցել, եթե կիրառենք սղման սկզբունքը: Օրինակ.

The thing is ... I've seen the most horrible things back in the States

→ I have seen the most horrible things back in the States.

Ինչպես տեսնում ենք, փոխակերպված տարբերակը նույն արտահայտչականությունը չունի, ինչ բնօրինակը: Այն ուղղակի փաստ է արձանագրում: Բնօրինակի դեպքում այն նախ շեշտվում է՝ “the thing is...” կառույցին հաջորդելով, և, միևնույն ժամանակ, գտնվում է վերջադաս դիրքում, ինչը բնորոշ է ռեմային: “The thing is...” կառույցի դիրքը միշտ անփոփոխ է. դրվում է առաջադաս դիրքում: Վերոնշյալից հետևում է այն, որ այս կառույցը շարահյուսական կախվածություն ունի:

Ինչպես “I mean” խոսույթային ցուցիչը, այնպես էլ “the thing is...” կառույցը ներմուծում է ռեմային հատված, սակայն, ի տարբերություն “I mean” ցուցիչի, այն ավելի ընդարձակ ռեմային հատված է ներմուծում:

Ռեմային հատվածներ ներմուծող կառույցների վերլուծության ընթացքում հանդիպել ենք մեկ այլ կառույցի ևս՝ ենթակա երկրորդական նախադասություն պարունակող փոխակերպված բարդ կառույցի (cleft construction): Ժամանակակից անգլերենում գոյություն ունեն երկու տեսակի մնան կառույցներ՝ հարաբերական դերանունով սկսվող կառույց՝ wh-cleft և անձնական դերանունով սկսվող կառույց՝ it-cleft, որոնցից wh-cleft-ը, որպես կանոն, օգտագործվում է բանավոր խոսքում, իսկ it-cleft-ը՝ գրավոր: Հարաբերական դերանունով սկսվող կառույցի հիմնական հաղորդակցական գործառույթն է շեշտադրել նախադասության այն հատվածը, որը հաջորդում է դրան:

Ներկայացնենք երկու ընկերների մի երկխոսություն, որտեղ ընկերներից մեկը խոսում է մյուսի հարբուխի մասին, և թե որքան լավն է չինական դեղորայքը.

Fei: Hi Jerry, what's wrong? You look a bit under the weather.

Jerry: I'm not feeling very well. I seem to be coming down with another cold.

Fei: Not again! You had a cold last month, and the month before that, too.

Jerry: Well, there's not much I can do about it. I'm not sick on purpose. *What I need to do is to take some medicine and take it easy.* /Learn English with Teacher Joe <http://doc/>

Հարաբերական դերանունով սկսվող կառույցի ռեմա ներմուծելու գործառույթը կարելի է ներկայացնել՝ փոխակերպական մեթոդը կիրառելով.

What I need to do is to take some medicine and take it easy. → I need to take some medicine and take it easy.

Ինչպես երևում է, փոխակերպված տարբերակը կորցնում է իր արտահայտչականությունը: Սովորաբար հարաբերական դերանունով սկսվող կառույցը որոշակի հակադրություն է ներմուծում: Ինչ վերաբերում է տվյալ կառույցի շարադասական առանձնահատկությանը, ապա այն միշտ առաջադաս դիրքում է հանդիպում:

Մեկ այլ ռեմա ներկայացնող կառույց է հարաբերական դերանունով սկսվող շրջադաս կառույցը, որը բանավոր խոսքում ավելի քիչ է հանդիպում: Բերենք հետևյալ օրինակը.

Mom: Yeah, I think one time I said past... I think I said five past six. In fact I purposely said past because I was trying to give you some variety of the difference... we can tell time... because Americans will say past.

Lori: *Yeah! That's what I think as well, that I... maybe naturally I'd be more likely to say after but I wouldn't think it was weird or strange if someone said past.*/Oprea <http://doc/>

Եթե համեմատենք “the thing is...” և հարաբերական դերանունով սկսվող շրջադաս կառույցները, ապա կտեսնենք, որ “the thing is...” կառույցը ավելի լայն ռեմային հատված է ներմուծում քան հարաբերական դերանունով սկսվող շրջադաս կառույցը, և, հետևաբար, վերջինս կոչվում է միկրո-ֆոկուս, իսկ մյուսը՝ մակրո-ֆոկուս ներմուծող:

Այս կառույցը մաս որոշակի արտահայտչականություն է պարունակում, ինչը կարելի է ներկայացնել, եթե գործածենք փոխակերպական մեթոդը.

That's what I think → *What I think is that*

Ինչպես տեսնում ենք փոխակերպված տարբերակը գուրկ է արտահայտչականությունից:

Բանավոր հանպատրաստից խոսքում հաղորդակցվողը իր խոսքաշարում հաճախ դիմում է հարցերին և ինքն էլ պատասխանում դրանց: Հարցը տվյալ դեպքում հռետորական բնույթ է կրում, քանզի այն ուղղված չէ մյուս հաղորդակցվողին: Կիրառելով նմանատիպ հարցեր՝ հաղորդակցվողը կարծես թե ցանկանում է ավելի կարևորել այն տեղեկատվությունը, որը հաջորդում է տվյալ հարցին իբրև պատասխան: Ահա երկխոսության մի օրինակ բրիտանացի թերահավատ մարդու և հնդկացի խորհրդապաշտի միջև.

Scept. Shall we not rather renew our inquiries into the nature of things, than, in unfertile compliment, waste the few hours we snatch awhile from death?

Myst. Willingly. But lately you were the “sahib” asking questions concerning Indian Philosophy as a great prince who should condescend to study the habits of horses or dogs — yesterday we changed all that.

Scept. I have but one apology to offer —*what? - that of Dr. Johnson.*

Myst. Pray forbear! Yet it may be for a moment instructive to notice the consideration which led you to assume a happier attitude; viz, that such identities of thought (implying such fine parallelisms of brain structure) were discovered, that, in short, you admitted the Indian (as you have been compelled to admit the Gibbon) to classification in your own genus /Hermetic Hosting <http://doc/>.

Այս օրինակից տեսնում ենք, որ *what?* հարցականը որևէ տեղեկատվություն չի պահանջում: Այն ընդամենը տրվել է որպես հռետորական հարց, որին անմիջապես պատասխան է հաջորդում: Այս միջոցը օժտված է արտահայտչականությամբ և հիմնականում հանդիպում է հանպատրաստից բանավոր խոսքում:

Այսպիսով, տեսնում ենք, որ ռեմային կառույցները հանպատրաստից բանավոր խոսքում ունեն իրենց հատուկ գործառական առանձնահատկությունները, որոնք զգալիորեն տարբերվում են գրավոր խոսքում օգտագործվող ռեմային կառույցներից: Այդ գործառական հատկությունները վերաբերում են դրանց հաղորդակցական և կառուցվածքային առանձնահատկություններին, ոճական արժեքին, բաշխումային հատկանիշներին, ինչպես նաև այն ռեմային հատվածներին, որոնք դրանք ներմուծում են:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Firbas J. Functional Sentence Perspective in Written and Spoken Communication. Cambridge: Cambridge University Press, 2006.
2. Ilyish B. The Structure of Modern English. Leningrad: Prosveshenie, 1981.
3. Miller J., Weinert R. Spontaneous Spoken Language. Oxford: Oxford University Press, 2009.
4. Quirk R., Greenbaum S., Leech G., Svartvik J. A Comprehensive Grammar of the English Language. London, 1982.
5. Better At English “Don’t Step in the Dog Doo” <http://www.betteratenglish.com/real-english-conversations-dog-doo-part-3-of-4/>
6. Hermetic Hosting “A Dialogue Between a British Sceptic and an Indian Mystic” <http://hermetic.com/crowley/collected-works/ii/time.html>

7. Learn English with Teacher Joe “Jerry and Fei reflect on what they've done in the past year” <http://www.teacherjoe.us/D17.html>
8. Oprea H. “Telling the Time” <http://hoprea.wordpress.com/tag/speaking/>

А. МИКАЕЛЯН – *Некоторые особенности ремавыделительных конструкций в спонтанном разговорном дискурсе в английском языке.* – В настоящей статье рассматриваются коммуникативные функции ремавыделительных конструкций в спонтанной речи в английском языке, дается их классификация, определяются различные способы передачи важности информации в различных сегментах речи посредством ремавыделительных конструкций в английском языке. В анализе основное внимание уделяется ремавыделительным конструкциям в спонтанном разговорном английском. В частности, определяются коммуникативные функции различных ремавыделительных конструкций, объем коммуникативного фокуса, представленного этими конструкциями, их дистрибутивные характеристики, а также их отличительные свойства. В процессе анализа было обнаружено, что спонтанный разговорный дискурс имеет ряд ремавыделительных способов, которые характеризуются специфическими коммуникативными особенностями. Однако общим у них является свойство введения коммуникативного фокуса.

А. MIKAYELYAN – *Some Peculiarities of the Focus Constructions in Spontaneous Conversational Discourse in English.* – The paper explores the communicative functions of the focus-expressing constructions in spontaneous speech in English, classifies them and finds out different ways of attaching importance to information at different segments of speech. It highlights the focus constructions in spontaneous spoken English, specifically: the communicative functions of different focus constructions, the scope of the communicative focus introduced by those constructions, their distributional features, structural characteristics, as well as the distinctive features of the focus constructions. It has been found out that the spontaneous conversational discourse has a wide range of focus-expressing devices that are characterized by specific communicative features. Yet, all of them have one thing in common, which is supposed to be focus-rendering or focus-introducing property.